

Արմատատը տեղեկատվություն է ներկայացնում 2019 թվականի հունվար-հուլիսի (այդ թվում՝ հուլիսի) երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

### ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2019թ. հուլիսի ամսական և 2019թ. հունվար-հուլիսի (աճողական) արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները

	Չափի միավոր	2019թ. հուլիս	2019թ. հուլիսը 2018թ. հուլիսի նկատմամբ, %	2019թ. հուլիսը հունիսի նկատմամբ, %	2019թ. հունվար-հուլիս	2019թ. հունվար-հուլիսը 2018թ. հունվար-հուլիսի նկատմամբ, %
Տնտեսական ակտիվության ցուցանիշը	%	x	108.1	112.8	x	106.8
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	մլն. դրամ	178 474.4	116.1	106.7	1 078 974.5	108.4
Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը <sup>1</sup>	մլն. դրամ	x	x	x	x	x
Շինարարության ծավալը	մլն. դրամ	35 745.0	104.1	105.9	166 748.2	104.5
Առևտրի շրջանառությունը	մլն. դրամ	281 698.3	109.1	109.3	1 696 787.4	108.9
Ծառայությունների ծավալը (առանց առևտրի)	մլն. դրամ	180 963.9	114.9	107.7	1 086 376.0	115.2
Սպառողական գների ինդեքսը	%	x	101.7	98.1	x	101.9
Էլեկտրաէներգիայի արտադրությունը	մլն. կՎտ.ժ	659.6	97.8	102.4	4 302.4	95.0
Միջին ամսական անվանական աշխատավարձը	դրամ	187 280	108.0	104.3	178 325	105.9
Արտաքին առևտրաշրջանառությունը այդ թվում՝	մլն. դոլար	691.3	113.0	106.6	4 195.5	102.3
	մլրդ. դրամ	329.4	x	x	2 025.4	x
արտահանում	մլն. դոլար	235.5	119.5	106.8	1 417.5	103.0
	մլրդ. դրամ	112.2	x	x	684.2	x
ներմուծում	մլն. դոլար	455.8	110.0	106.5	2 778.0	101.9
	մլրդ. դրամ	217.2	x	x	1 341.2	x

<sup>1</sup> Այսուհետ սույն ցուցանիշը, համաձայն «2019 թվականի վիճակագրական ծրագրի» Հավելված 1-ի, 1. Իրական հատվածի, 1.2 Արտադրություն (ծառայություններ) ենթահատվածի, 1.2.2 Գյուղատնտեսություն և ձկնորսություն ոլորտի, տող 29-ի ծածկագիր 122029-ի, հրապարակվելու է միայն եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսական արտադրանքի արտադրության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության համահարթեցման անհրաժեշտությամբ: Սույն մոտեցումը կիրառվում է միջազգային վիճակագրական պրակտիկայում: Այսպես, համաձայն Եվրամիության «Վիճակագրական պահանջների կոմպենդիում, 2018»-ի «3.1.2. Գյուղատնտեսության վիճակագրություն» ենթակետի, Եվրամիության անդամ երկրներում գյուղատնտեսության վիճակագրության հրապարակումները կրում են տարեկան պարբերականություն (հղում՝ <https://ec.europa.eu/eurostat/documents/3859598/9393837/KS-GQ-18-009-EN-N.pdf/a1d2ffe9-2ba9-4b57-8e6c-6c13575ef072>, 132-141 էջեր, հրապարակված 2018թ. հոկտեմբեր, ԵՄ, Լյուքսեմբուրգ):